



## ՀԵՏԱԲՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

### Բնչ է հողը:

Առաջին հերթին հողը մարդու գոյության հիմնական պայմանն է և նրա զարգացման հիմքը: Մարդու համար աստիճանաբար հողը վերածվեց արտադրության (գյուղատնտեսություն) միջոցի, այն ունի մի զարմանալի առանձնահատկություն՝ ձիշօր և գիտականորեն հիմնավորված օգտագործման դեպքում չի մաշվում, չի վատանում և նույնիսկ կարող է ավելի լավը դառնալ և պահպանվել:

Ավելացնենք նաև այն առանձնահատկությունը, որ հողը բույսերի հետ միասին հսկայական քանակությամբ արևի ճառագայթային էներգիա է կուրակում:

Հողի ծածկույթը իր կառուցվածքով բազմաշերտ է: Այն կազմավորվում է բավականին դանդաղ, մայրական ապարների քայքայումից, բույսերի և կենդանիների մնացորդների կուրակումներից և ակտիվ փոխազդեցության մեջ է տեղանքի ռելիեֆի հետ:


Հողի ամենավերին, մակերեսային շերտը կամ այսպես կոչված հումուսային հորիզոնը բնակեցված է: Այստեղ ապրում են բույսերի բազմաթիվ տեսակներ, կենդանական աշխարհի մի շարք բնակիչներ՝ մանր կաթնասուններ, հողվածոտանիներ, որդեր, սնկեր, ջրիմուռներ, միաբջիջ օրգանիզմներ և հսկայական քանակությամբ մանրէներ: Այստեղ են նաև դրանց անկենդան մնացորդները: Այս մնացորդների փրելու, քայքայվելու արդյունքում էլ առաջանում է հումուսը: Հումուսը կայուն օրգանական նյութ է: Հումուսային հորիզոնը բաղկացած է երեք ենթաշերտերից, դրանք են՝ թաղիքը, բուն հումուսային շերտը և փարայցված բաց գոյնի հողը:

Հողի հորիզոնների միջև ընթանում է նյութերի շրջապտույտ: Բույսերը հողում առկա հանքային նյութերը կլանելով իրենց ներսում սրեղծում են օրգանական միացություններ: Այս միացությունները ընթացքը այնուհետև շարունակում է կենդանական աշխարհը: Բույսերի ու կենդանիների մահից հետո այս միացությունները վերադառնում են հող և ժամանակի ընթացքում քայքայվելով վերածվում կենսապտու հումուսի:

Հողածածկի հաջորդ հորիզոնը կազմված է հողի հանքային փարրերից: Իր բաղադրությամբ այն մանրէների կողմից մշակված օրգանական նյութերի և մայրական ապարների հանքաշերտերի խարնուրդներ են: Երրորդ հորիզոնը մայրական ապարների հանքաշերտն է (Նկ.1):

Թթվածնի, ածխաթթու գազի, ազոտի, այսինքն՝ օդի հիմնական բաղադրիչների դինամիկան իր մեջ ընդգրկում է հող համակարգը: Կարևոր

բազույն օղակ է հող-ջուր համակարգը: Հողը մթնոլորտային տեղումների միջոցով սրանում է (կլանում է) ջուր, որը բույսերի կողմից գոլորշացման միջոցով կրկին վերադառնում է մթնոլորտ: Այսպիսով հողը նույնպես մասնակցում է Երկրի վրա ջրի շրջապտույտին: Երկրի մթնոլորտը, ջրոլորտը, պինդ շերտը և հողային ծածկոցը փոխադարձ սերտ կապի մեջ են: Այսինքն, հողային ծածկոցը բազմակի օգտագործման բնական ռեսուրսի մի յուրահատուկ ձև է, որը բուսականության հետ մեկտեղ հսկայական դերակատարում ունի Երկրի կենսոլորտի բնականոն ընթացքի ապահովման գործում:



Նկ. 1. Հողի կառուցվածքային սխեման:

Սովորաբար վարելաշերտի վերևում ևս ենթադրում են մի այլ շերտ՝ օրգանական շերտը, որը կազմված է օրգանական նյութերից:

Հողն ունի բնական բերրիություն և բերքի ձևով մարդու համար անհրաժեշտ սնունդ, հումք, կենդանիների համար՝ կեր ստեղծելու ունակություն: Հողը մարդու համար ստեղծում է կենսաբանական արտադրանք, հողում առկա քիմիական տարրերի և միացությունների առկայությունը կամ բացակայությունը ազդում է կենդանիների, բույսերի որակական հատկանիշների վրա, որոնք սննդամթերքի ձևով անցնում են մարդու օրգանիզմ: Այսպեղից կարող ենք հետևություն անել, որ մարդու առողջության պահպանման գործում հողը նույնպես անփոխարինելի միջոց է: Առանձնակի կարևորություն ունի հողի սանիտարապաշտպանիչ հատկությունը: Այն հզոր ֆիլտր է և ընդունակ է մաքրելու տարաբնույթ ջրային լուծույթները, իրար կապելու քիմիական միացությունները (Հիշենք խմելու և ոռոգման նպատակներով գրունտային ջրերի, ջրհորների օգտագործումը):